19 փետրվարի 2015 թվականի N 150 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 1835-Ն ԵՎ 2011 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-Ի N 1819-Ն ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «Բարձրաստիճան պաշտոնատար անձի հարկային տարվա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրերում, բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնական պարտականություններն ստանձնելու կամ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրում, ինչպես նաև բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնուն, համատեղ ապրող ծնողին, համատեղ ապրող չափահաս և չամուսնացած զավակին սեփականության իրավունքով պատկանող՝ հարկային տարվա գույքի, եկամուտների մասին հայտարարագրերում ներառված հրապարակման (տրամադրման) ենթակա տվյալների

ցանկը, բովանդակությունը և ձևը սահմանելու մասին» N 1835-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման N 1 հավելվածի՝

ա. 1-ին կետի 8-րդ ենթակետից հանել «, եթե անշարժ գույքի ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը կամ օտարման գործարքների ընդհանուր գինը գերազանցել է 50 մլն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը» բառերը,

բ. 1-ին կետի 9-րդ ենթակետից հանել «, եթե բարձրաստիճան պաշտոնատար անձի և նրա ամուսնու կողմից հարկային տարվա ընթացքում օտարված, իսկ ձեռքբերման դեպքում՝ նաև ձեռք բերված շարժական գույքի մեկ միավորի գինը գերազանցել է 7 մլն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը» բառերը,

գ. 1-ին կետի 10-րդ ենթակետից հանել «, եթե գործարքի գինը գերազանցել է 5 մլն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը» բառերը,

դ. 1-ին կետի 11-րդ ենթակետից հանել «, եթե հարկային տարում փոխառության գործարքի արժեքը գերազանցել է 3 մլն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը» բառերը,

ե. 2-րդ կետի 10-րդ և 11-րդ ենթակետերը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«10) պաշտոնական պարտականություններն ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ բարձրաստիճան պաշտոնատար անձի հանձնած կամ բարձրաստիճան պաշտոնատար անձին վերադարձված փոխառության արժույթը, գումարը (չափը).

11) բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականություններն ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ՝ հայտարարագրի աղյուսակի 2-5-րդ կետերում չնշված՝ 8 մլն դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած գույքի (թանկարժեք գույք) անվանումը, համառոտ հատկանիշները»,

զ. 2-րդ կետի 13-րդ ենթակետից հանել «տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնական պարտականություններն ստանձնելու կամ դադարեցնելու» բառերը,

է. 3-րդ կետի 7-րդ ենթակետից հանել «, եթե անշարժ գույքի ձեռքբերման գործարքների ընդհանուր գինը կամ օտարման գործարքների ընդհանուր գինը գերազանցել է 50 մլն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը» բառերը,

ը. 3-րդ կետի 9-րդ ենթակետից հանել «, եթե բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնու կողմից հարկային տարվա ընթացքում օտարված, իսկ ձեռքբերման դեպքում նաև ձեռք բերված շարժական գույքի մեկ միավորի գինը գերազանցել է 7 մլն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը» բառերը,

թ. 3-րդ կետի 11-րդ ենթակետից հանել «, եթե գործարքի գինը գերազանցել է 5 մլն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը» բառերը,

ժ. 3-րդ կետի 13-րդ ենթակետից հանել «, եթե հարկային տարում փոխառության գործարքի արժեքը գերազանցել է 3 մլն դրամը կամ դրան համարժեք արտարժույթը» բառերը.

2) որոշման N 2 հավելվածի՝

ա. 2-րդ կետի 11-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«11) բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականություններն ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ՝ հայտարարագրի աղյուսակի 2-5-րդ կետերում չնշված՝ 8 մլն դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող թանկարժեք գույքի անվանումը, համառոտ հատկանիշները, թանկարժեք գույքի առկայության վերաբերյալ նշումը.»,

բ. 2-րդ կետի 13-րդ ենթակետից հանել «տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև պաշտոնական պարտականություններն ստանձնելու կամ դադարեցնելու» բառերը:

2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 15-ի «Բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ հարկային տարվա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրի, հարկային տարվա՝ բարձրաստիճան պաշտոնատար անձի ամուսնուն, նրա հետ համատեղ ապրող ծնողին, չափահաս և չամուս-

նացած զավակին սեփականության իրավունքով պատկանող գույքի և եկամուտների հայտարարագրի ու բարձրաստիճան պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտակա-նություններն ստանձնելու կամ պաշտոնական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարա-րագրի օրինակելի ձևերը հաստատելու մասին» N 1819-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման N 2 հավելվածի՝

ա. 6-րդ բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

6. Բարձրաստիճան պաշտոնատար անձի պաշտոնական պարտականություններն ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ՝ սույն աղյուսակի 2-5-րդ կետերում չնշված՝ ութ միլիոն դրամը գերազանցող կամ դրան համարժեք արտարժույթից ավելի արժեք ունեցող ցանկացած գույք (թանկարժեք գույքը)			
NN ը/կ	Գույքի անվանումը	Համառոտ հատկանիշները	Առկա է պաշտոնական պարտականություններն ստանձնելու կամ դադարեցնելու օրվա դրությամբ
1	2	3	4
6.1.			
6.2.			
6.3.			
6.4.			
6.5.			

»,

բ. 8-րդ բաժնի վերնագրից հանել «պաշտոնական պարտականություններն ստանձ-նելու կամ դադարեցնելու տարվան նախորդող հարկային տարվա ընթացքում, ինչպես նաև» բառերը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Հ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ